արս ԺԷ տուրկէր՝ տարան առաջի դքսին զոմն կէպուլ, և հարցանէր, և նա ասէ. Ոչ ես գիտեմ զհրամայողս, քանզի բազումք զնացեալ գործէին և ես ևս մէկ քանի օր բանեցայ։ Եւ կրկին ասէ. Ո՞վ ետ ձեզ հրաման և ո՞վ էառ փող ի ձէնջ և կաշառ, ո՞չ ապաքէն մէյմար աղան ետ ձեզ հրաման. և նոքա ասեն՝ չգիտել։ Եւ զնոսին արկին ի բանտ և սկսան տալ տանջանս կոտա-մահս և չարչարանս, ասել զմէյմարէ թէ Նա ետ հրա-ման (Ռէրէ)։

Եւ Մայիսի ԺԶ թէխլիս արարեալ զայս բան առ արքայ թէ Ի զնալն մեր յէտրէնէ՝ քեաֆիրք միաբան լեալ և ԻԱ. եկեղեցի իւրեանց չինեալ, և է պատճառ մէյմարն քո. զայս լուեալ արքայի՝ ասէ. Տաճկա-ցուսջի՛ք[1]) և կամ սրոյ բաժին արասջիք։ Այս կամք էր վէզիրին խորհրդեամբ Վանի ոմն չէյխ պղծոյ, բայց մուհտին և այլք ղազիէսքէրք չկամեցան զվնաս ռա-յին. նա՛ և վասն դիմակ լինելոյ պղծոյն, նա և վասն հիլլէի չէրի առնելն Քեօփրուլուի, զի աղաղակն բար-ձրանայր յոյժ տառապելոց յամենայն դրուն մեծա-մեծաց, զծախն ի միրիէն եւ զհրաման տալն նոցա, զի ոմանք ի մեծամեծացն այսու արդարացուցին զմեզ։ Թէպէտ ֆէթվա չետուր մուհտին, այլ բերանով ասաց՝ Նա՛ եւ մազուլ քէհեապէկն եւ տէֆտէրտարն առին զկաշառս սոցա և ետուն հրաման, և ի ժամանակ չի-նութեան ո՞չ էին ամենայն բռնակալք աստ, ընդէ՞ր ասացին՝ Զի՞նչ է չէնք ձեր. այսու ամենայնիւ զա-նօրէնս հաւատացուցին։ Եւ երկրորդ անգամ տարեալ առաջի զկալանաւորս և հարցանէր վէզիր և ծանեան զկամս վէզիրի եւ ի բերան նորա՝ թէ զմէյմար խըն-դրէ, ասացին. Այո՛, և գրեցին. Նա և Ղալաթոյ Ցու-նացն ասացեալ պօստանճի Մուստաֆայ և Հասան խա-

1) տաճկացուցջիր։